1462

# ...ԼԱՑՈՅՑ

[illegible] ներկայ Տարւոյս օրացուցներուն բաղմաթիւ սխալները կ'ուղղէ ։

ՅԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԷ

ԽԱՍԳԻՒՂԻ

Ի Կ. ՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ

Յ. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

# ՍԽԱԼԱՑՈՅՑ

Որ 1874 Թուականին բոլոր տպեալ օրացոյցներուն բազմաթիւ սխալները կը ցուցանէ եւ սրբագրելով կ'ուղղէ։

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի Տ. ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԷ

Խ Ա Ս Գ Ի Ւ Ղ Ի

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

BELEDİYE
KÜTÜPHANESİ
1462

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր սիրելի ազգայնոց ծանօթ է, 7–8 տարի առաջ ազգային վարչական ժողովի խնդրանօք կառավարութենէն օրացոյցի հեղինակութեան եւ տպագրութեան համար յատուկ արտօնագիր ստացած ըլլալս՝ եւ զանի ջնջելու համար մօտ ատեններուս մէջ տեղի ունեցած անցքերը, այն է Խ. Ս. Հօր Պատրիարքութեան օրովը նոյն անօրէնութիւնը խիստ անտեղի եւ անիրաւ համարուելով, մենաշնորհութիւն սեպուեցաւ, մեր իրաւունքը ոտնակոխ ընելով եւ վտանգի ենթարկելով այս ամենափափուկ գործը։ Եւ երբեմն

երեւցող այժմ անյայտ եղող կրթութեան խորհուրդ ըսուած ժողովն ալ նուրբ եւ անսխալ քննութեամբ Օրացոյցը մեզ չը վերաբերիլը հաստատելու համար 'ի զուր փաստեր գտնելու տքնեցաւ՝ ուզելով որ ամեն ոք խրատունք ունենայ Օրացոյցի տըպագրութեան · բայց ինչպէս մեր բազմամեայ աշխատութիւնը եւ գործոյն յարգը մէկէն 'ի մէկ մոռնալով, չը ճանչնալէն զատ, չը կրցան մտածել թէ, գիտէին օրացոյցի շինութեան արհեստը անոնք, որ տպելու կը բաղձային, եւ որոնց պաշտպանութիւն ընել ուզուեցաւ· չը կըրցան մտածել, թէ իմ քրտնաջան աշխատութեամբս պատրաստած գործըս՝ տպագրիչք օրինակել եւ մեր ամենափոքր շահը յափշտակել պէտք էր, մենավաճառութիւն չըլլալու համար · վերջապէս չը կրցան մտածել թէ այսպիսի անիրաւութիւն մը

պաշտպանելնուն փոխարէն , պիտի կրնայի՞ն տպագրիչք անոնց երեսը ճերմակ հանելու կարողանալ ։ Մենք ալ այժմ մէկ կողմ քաշուած՝ ասոնք դիտելու պարտաւորուեցանք , այս տարուան համար Օրացոյց մ'անգամ չը տպելով ։

Բայց 'ի շնորհս . . . եւ իր համախոհներուն այսօր շատ մը ամենամեծ սխալներով լի Օրացոյցներ հրատարակուած տեսնելով, մեզ դէմ եղած ապերախտութեան փոխարէն առանց միտ դնելու՝ պարտաւորութիւն համարեցինք ուղղել անոնց սխալները 'ի գիտութիւն եւ 'ի զգուշութիւն ազգայնոց ։

Կրթութեան խորհուրդը անցեալները Մասիս լրագրոյ մէջ հրատարակած տեղեկագրոյն հինգերորդ յօդուածին մէջ կըսէ թէ ( Ազգային վարչութիւնը առանց Տ. Երեմիա քահանային սեպհականելու օրացոյցի հե-

ղինակութիւնը, ամէն ժամանակ իրաւունք ունի որ եւ իցէ տպարանէ ելած օրացոյցի տպագրութիւնը անվաւեր հրատարակել, երբ որ ազգային վարչութենէն վաւերացած չէ. եւ յայտնի տօնական սխալներ կը պարունակէ ընդդէմ արարողութեանց հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ)։

Ուրեմն ներկայ 1871 թուականին հրատարակուած սխալ օրացոյցները Հրամանաւ Ս. Պատրիարքի ըԱալը Նըչանակուած է, ինչպէս ազգային վարչութիւնը զանոնք վաւերացուց, ասոնց սխալները տեսնելու եւ անվաւէր հրատարակելու վերոգրելոց համեմատ. ասոնք ըսելն ալ աւելորդ է, որովհետեւ ով պիտի գիտնար եւ ուղղէր անոր ամէն մէկ սըխալները։

Երբ ազգային վարչական ժողովը անոր հեղինակութիւնը մեզ յատկա-

ցուց, չէ թէ ոմանց կարծածին պէս ինձ շնորհք մը ընելու համար, այլ սխալներովը շփոթութիւններ եւ խառնակութիւններ չը ծագելու համար էր, ինչպէս որ արտօնագրոյս մէջ ալ յիշուած էր։

Արդի Ազգային վարչութիւնը աստեղաբաշխական հաշիւներու եւ ուրիշ ազգաց տօներու սխալներէն զատ, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ տօնական սխալներուն ալ անփոյթ գտնուած ատեն, ուրեմն ինչ պէտք է Ս. Եկեղեցւոյ մէջ անոնց նկատմամբ արարողութիւններ յիշատակութիւններ, եւ տօնախմբութիւններ, եւ անոնց հետ մէկ տեղ կրօնքն ու Աստուածպաշտութիւնը։

Կրթութեան խորհուրդը խոհուն մտածութեամբ այնպիսի տեղեկագիր մը հրատարակեց եւ այնպիսի օրինաւոր որոշում մը ըրաւ որ յաջողեցաւ ազգին նախատինք եւ ամօթ

բերող բազմախաղ օրացոյցներու հրատարակման տեղի տալու , եւ հիմա ալ իր տեղեկագիրը յիշելով կարմրրելով լռել պարտաւորեցաւ , եւես ալ որ յիսնամեայ ժամանակ շնորհիւն Աստուծոյ անբասիր վարուք ազգային չորս տեսակ պաշտօններու մէջ անխոնջ ծառայութեամբ , մանաւանդ Օրացոյցի հեղինակութեամբ ուղղեցոյց էի , հիմա այս տարի չընորհիւ . . . եւ իր համախոհներուն Սխալացոյց եղայ ։

Ողորմելի ազգ ։

ԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅ

ԽԱՍԳԻՒՂԻ ։

# ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ ՏՊԵԱԼ ՕՐԱՑՈՅՑՆԵՐՈՒՆ ԲԱԶՄԱԹԻՒ ՍԽԱԼՆԵՐԸ

## ՅՈՒՆՈՒԱՐ

1 *Գրած քառորդը ճիշդ* 2 *ին է.*
8 *Լուսնի ծնունդը՝* 9 *ին է 'ի ժամ*
8. *րո.* 48.
9 *Տճ. Չիլքաուէն սխալ է, ճիշդը*
10 *ին է.*
13 *Հայոց Թուականին վեցերորդ*
*Արաց ամիսը պակաս է.*
15 *Լուսնի քառորդը ճիշդ* 16 *ին է*
*'ի ժմ.* 21. *րո.* 45.
17 *Չորրորդ հր. եկեղեցական սխալ*
*է. որովհետեւ նոյն դ. հր. եկե-*
*ղեցին նայ.* 22 *ին կարդաց, այնաք*
*է հինգերորդ հր. կարդացուի.*
24 *Պէտք է հարսանիք դնել, եւ*

լս. ծն. 13 ժմ. սխալ ունի.
31 Դարձեալ հարսանիքը չէ գրեր, Գ. հր. եկեղեցական սխալ է, վասն զի երրորդը մեր սուրբ եկեղեցին հոկ. 11 ին կարդաց, եւ չորրորդն ալ դեկ. 6 ին կարդաց. ուստի պէտք է հինգերորդը գրուի։
Լուսնի քառ. 16 ժամ ուղիղէն յառաջ է։

## ՓԵՏՐՈՒԱՐ

4 Մեր Ս. եկեղեցին այսօր մեռելոցի յիշատակ կը կատարէ, որ չէ գրեր.
7 Լուսնի ծն. 11 ժամ սխալ ունի.
12 Հայոց Մեհեկի ամիսը չէ գրեր.
14 Լուսնի քառ. 40 ժամ ուղիղէն յառաջ է, պէտք է 15 ին գրուի ժամ 17 րո. 56.
22 Լրումն լուսնի 23 ին է, 15 ժամ սխալ ունի։

## ՄԱՐՏ

9 Տճ. ճիշդ տարեմուտը 10 ին է.

10 Հրէից Նիսան ա. ամիսը ըստ Աստուածաշնչին մեծ սխալ է, որովհետեւ մեր Ս. Զատիկը անկէց կախումն ունի. ուղիղը 11 ին է.

15 Հայոց Արեգ. ամիսը ճիշդ 14 ին է. եւ Հրէից Ապիպը 16 ին է 'ի ժամ 13 րո. 46:

16 Լուսնի քառ. 17 ին է. 38 ժամ սխալ ունի:

23 Մեր Ս. եկեղեցին այն օրը տասն կուսանաց յիշատակը կը կատարէ, որ չէ դրեր. եւ աւագ լըրումը, ուրկէց Զատիկը կախումն ունի, 24 ին է, 40 ժամ սխալ ունի:

24 Հրէից Պասէքի մեծ տօնը Աստուածաշունչ Ս. գրոց հակառակ մեծ սխալ կը համարուի, եւ ճիշ-

դր Եչ․ օր 25 ին է ։

23 Հրէից Բ․ օր պայրամին ըսածը սուտ է․ ուրախնեան 26 ին է ․

30 Հրէից Է․ օրը 31 ին է ․

31 Հրէից Ը․ օրը ապրիլ 1 ին է ։

## ԱՊՐԻԼ

4 Հրէից ծոմը 5 ին է ․

7 Լուսնի ծնունդ 8 ին է ․

8 Տճ․ Սէֆէրը 9 ին է ․

9 Հրէից Եառ ամիսը 10 ին է ․

14 Հայոց Ահեկան ամիսը 13 ին է ․

21 Լատինացւոց Գիւտ խաչ է ․

22 Հրէից Ի․ խամուրսուզը 23 ին է ։
Նոյն աւուր լս․ մր․ 23 է ճիշդ ։

## ՄԱՅԻՍ

8 Հրէից Սիվան ամիսը 9 ին է ․

9 Արեգական մուտը 17 ժամ ու- խայ ունի ․

13 Հրէից Պէնտէկոստէ մեծ տօնը 14 ին է ․

15 Հրէից ի · որ պէտք է գրել ·

17 Յունաց ուտիք է յայսմ եօթնեկի · պէտք է գրել ·

20 Դրած խաւարումը ազգիս ամօթ եւ նախատինք բերող սխալ մի է, եւ Աստուածային յաւիտենական օրինացը հակառակ, եւ աշխարհիս Աստուածային արարչագործութեան օրինացը ընդդէմ, եւ աստեղաբաշխական հաշուոյ անհամաձայն. որովհետեւ բուն ճիշդ լրման կէտէն 32 ժամ յառաջ կը ցուցընէ, որ անկարելի է. եւ հետեւաբար մայիս 21 ին գրած լրումը երեւելի սխալ է, եւ ուղիղը ճիշդ մայիս 22, ժամ 12, րոպէ 18 ին է ըստ աստղաբաշխական դրութեան ։

24 Յունաց առաքելոց պահքը օր մը աւելցունելով 37 կը գրէ · որ ճիշդը 36 օր է ·

30 Քառորդը 29 ին է 19 ժամ սխալ ունի ։

## ՅՈՒՆԻՍ

5 Լուսնի ծնունդը 6 ին է ․
6 Տճ․ Րէպիլախըրը 7 ին է ․
7 Հրէից Թամուզ ամիսը 8 ին է ․
12 Լուսնի քառ. երկու օր տարբերութեամբ սխալ է , քառորդը լուսնական ամսոյն չորս մասին մէկը ըսել է , եւ նոյն օրը ճիշդ լուսնին վերջն է ․ եւ չորս անգամ վերը 24 կընէ , եւ 24 օր լուսնի ամիս չըլլար , եւ լուսնի 6րդ օրը երբէք քառորդ պատահած չէ ․ եւ չպիտի պատահի , ուստի ուղիղը 14 ին է ․
13 Հայոց Մարգաց ամիսը 12 ին է․
23 Հրէից ծոմը 24 ին է ․
26 Քառորդը 27 ին է , 31 ժամ սըխալ ունի ։

## ՅՈՒԼԻՍ

3 Մեր եկեղեցին այսօր Նաւակա-
տիք ունի, չէ դրեր.
6 Հրէից Աբ ամիսը 7 ին է.
12 Քառորդը 13 ին է, 34 ժամ ճիշ-
տէն տարբեր է.
13 Հայոց Հրոտից ամիսը 12 ին է.
14 Հրէից ծամը 15 ին է.
19 Լրումը 20 ին է.
28 Քառորդը 27 ին է.

## ՕԳՈՍՏՈՍ

5 Հրէից Ելուլը 6 ին է.
12 Հայոց Աւելեաց ամիսը 11 ին է.
17 Լրումը 18 ին է. այս սխալը
մեծ է. որովհետեւ նոյն օրը
լուսնի 13 է, եւ 27 օր լուսա-
նական ամիս չըլլալը յետին
համբակին յայտնի է.
25 Քառորդը 26 ին է:

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

3 Տճ. Րէճէպ եւ իւչ այլար 4 ին է. Հր. Թշրին եւ 5632 ին տարեմուտը ճիշտ 4 ին է։
5 Հր. ծոմը 6 ին է։
9 Քառորդը 10 ին է։
12 Հր. Զօրապ պայրամին 13 ին է, եւ մեծ սխալ է։
16 Հայոց Հոռի ամիսը 15 ին է.
17 Հր. Գամիշ պայրամին ճիշտ 18ին է, եւ մեծ սխալ է.
18 Հր. ը. օր պայրամին 19 ին է.
19 ա. եւ բ. Հր. Եկեղեցական սըխալ է, որովհետեւ այս երկու համբարձիները մեր սուրբ եկեղեցին յուլիսի 25 ին կարգաց, եւ պէտք է գ. գրել.
20 Սիւնակեաց բառին սեռականը սիւնակեցի կըլլայ, եւ ամօթ է հայկական բառի մը հոլովմունքը չճանաչելը.

23 Հր. Է. օրը 24 ին է.
24 Հր. Ը. օրը 25 ին է.
25 Հր. Թ. օրը 26 ին է.
29 Տծ. Միրաճ կէճէսին սխալ է, ուղիղը 30 ին է։

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

2 Լուսնի ծնունդը ժմ. 14 րս. 41 ին է. ուստի տծ. Շապան ամիսը ճիշտ 3 ին է.
3 Հր. Խէսուան ամիսը ճիշտ 4 ին է.
16 Տծ. Պէրաթ կէճէսին սխալ է, 17 ին է ուղիղը.
17 Պէտք է գրել Դամայ, եւ ոչ թէ Ադամայ, եւ լս. լր. 16 ին է, 'ի ժմ. 16 րս. 43. որով 30 ժմ. սխալ ունի, թէ որ լուսնի այս լրման խաւարում պատահէր, իր հաշուին համեմատ ինչ պիտի գրեր։
31 Լուսինը նոյ. 1 ին կը ծնանի 'ի ժմ. 2. րս. 57. 14 ժմ. սխալ ունի։

## ՆՈՅԵՄԲԵՐ

1 Տճ. Ռամազանը, Հր. Քասլեւ ա-
միսը ճիշտ 2 ին է.

14 Լտ. գալստեան առաջին կիւրա-
կէն զարմանալի սխալ է, եօթն
օր տարբերութեամբ, վասն զի
ճիշտ Նոյեմբերի 21 ին է ուղի-
ղը. եւ նոյն աւուր լուսնի լը-
րումն ալ ճիշտ 15 ին է, 'ի ժմ.
10 րդ. 45.

15 Հայոց Տրէ ամիսը 14 ին է.

16 Ազարիայի Հայոց ամիսներուն
մէջ Ամիրայ, պարօն, պէյ, բա-
շայ անուանով ամիս չունիմք,
ուստի սոյն օրը գրած Ամիրայ
հայոց ամիսը պէտք է գրուիլ
Համիրայ.

21 Պէտք է գրել այսօր լտ. առա-
ջին կիւրակէ գալստեան. եւ
գրած լուսնի քառորդը 63 ժամ
սխալ ունի. որովհետեւ այս քա-

ուրդը 23 ին է 'ի ժմ. 15. րո. 58.
25 Հր. Խանուկայն, այսինքն խան-
տիլ պայրամին ճիշտ 26 ին է.
29 Նկեղեցական մեծ սխալ մի.
Այսօր մեր Ս. եկեղեցին ըստ կարգադրութեան նախնի Ս. Հայրապետաց պէտք էր տօնել Գղերիկոս Ս. քահանային եւ երկուց բիւրուց այսինքն քսան հազար երջանիկ մարտիրոսաց տօնախմբութիւնը, որք Նիկոմիդեա քաղաքը Ս. եկեղեցւոյ մէջ վասն հաւատոյն Քրիստոսի հրով կատարեցան հրամանաւ Մաքսիմիանոս ամբարիշտ արքային. բայց օրացոյցիս հեղինակը այս երջանիկ Ս. մարտիրոսները տօնախմբութեան կարգէն դուրս ձգեր է, պատճառը մեզ անծանօթ է.

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

1 Լս. ծն. Նոյեմբերին 30 ին է, Ի ժմ. 13. րռ. 54.
15 Հայոց Քաղոց ամիսը 14 ին է.
21 Քառորդը 23 ին է, 41 ժմ. սխալ ունի.
29 Լս. ծն. 30 ին է.
31 Հր. Սեբաստ ամիսը 30 ին է.

## ՄԻՒՀԷՆՏԻՍՆԱՆ ՕՐԱՑՈՅՑՆԵՐՈՒՆ ՍԽԱԼՆԵՐԸ

### ՅՈՒՆՈՒԱՐ

1 Հր. ամիսը Սեբաստը չէ, այլ Թէբէթն է.
8 Լուսնի ծնունդը 9 ին է, 13 ժմ. սխալ ունի. դարձեալ 8 ին լս. ծն. կըսէ, 10 ին Ջիլղատէ կըսէ.

զի բնական օրինօք լուսնի ծը-
նած աւուր հետեւեալ օրը ամ-
սոյն մէկը պիտի ըլլայ · զարմա-
նալի սխալ·

17 Յարութեան հր. Ն · պէտք է
գրել , զի Դ· ըն նոյեմ . 22 կար-
դաց սուրբ եկեղեցին·

24 Լուսնի լրումը ուղիղէն 10 ժմ.
յառաջ է.

31 Պէտք է հարսանիք դնէ, եւ յա-
րութեան համբարձին գ կը գրէ
որ սխալ է , զի Դ· ը հոկտ· 11 ին
եւ Դ· ը դեկտ· 6 ին եկեղեցին
կարդաց, ուստի պէտք է Ե. գրէ·

## ՓԵՏՐՈՒԱՐ

6 ճէմրէն 7 ին է.
7 Արեգական մուտը 6 ին է·
10 Հր. ամիսը Ադար է, Վէադար չէ.
13 ճէմրէն 14 ին է.
20 ճէմրէն 21 ին է.

## ՄԱՐՏ

15 Հայոց Արեգ ամիսը 14 ին է, եւ Հր. Ապիպը 16 ին է.
24 Աւագ լրումը 16 ժմ. սխալ ունի.

## ԱՊՐԻԼ

4 Հր. Ծոմը 5 ին է.
19 Հր. Ծոմը 18 ին է.

## ՄԱՅԻՍ

17 Ցն. ուտիք է յայսմ եօթնեկի, պակաս է.
24 Ցն. պահք 36 օր է.

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

5 Յարութեան համբարձի առաջինը սխալ է, որովհետեւ յուլիս 11 ին եկեղեցին կարգայ առաջինը.

17 Լս. լր. 23 ժմ. սխալ ունի իր բուն կէտէն.

19 Յարութեան համբարձին ա. եւ բ. սխալ է, որովհետեւ առաջինն ալ երկրորդն ալ եկեղեցին յուլիս 25 ին կարդաց. ուստի պէտք է երրորդը գրել։

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

2 Լս. ծն. 12 ժմ. սխալ ունի.

## ՆՈՅԵՄԲԵՐ

21 Այս կիւրակէ օրը պէտք է դըրուի, Լտ. առաջին կիւրակէ գալըստեան.

26 Տճ. Գատըր կէճէսին 27 ին է.

29 Եկեղեցական մեծ եւ աններելի սխալ մը. այս օրացոյցն ալ այսօրեայ տօնելի քանի հազար երջանիկ մարտիրոսները որ Նիկոմիդեայ քաղաքը Ս. եկեղեցւոյ

մէջ վասն հաւատոյն Քրիստոսի հրով այրեցան՝ չէ դրուեր ատոնց հետ 'ի միասին Գշերիկոս Ս. քահանայն ալ որ տօնելի Սրբոց կարգէն է ։

---

## ՏԷՐՈՑԷՆՑ ՊԱՏՈՒՆԼԻՒՆ ՕՐԱՑՈՅՑՆԵՐՈՒՆ ՍԽԱԼՆԵՐԸ

### ՅՈՒՆՈՒԱՐ

1 Քանի որ օրը Ուրբաթ է, հարցը աղցմի չըլլար, հապա պէտք է գրել հարց հանգ. դձ. եւ Հայոց Արամ ամսոյն ժէ. է .

3 Պէտք է գրել, հբ. դ. տ. ցվերջն. Եւ Լտ. տօն անուան Յիսուսի ։

10 Հրէից Սեբաթ ամիսը 10 ին է .

11 Լտ. այն տօնը չըվայլէր գրել, որովհետեւ Ս. Աւետարանը մինակ խօսեցեալն էր կըսէ .

15 Այսօր հայոց Ովկան ամիս է․ որ 14 ին է գրեր․
24 Հրէից տարեգլուխը 25 ին է․
25 Լուսնի լրումը 24 ին է․
30 Այսօր Յն․ յիշատակ մեռելոց գրելի է․

## ՓԵՏՐՈՒԱՐ

3 Յունաց յիշատակ մեռելոց գրածը սուտ է․
6 Տճ․ ճէմրէն 7 ին է, որովհետեւ երկրորդը 14 ին է գրեր․
7 Այսօր կը ծնանի լուսինն, եւ ոչ թէ 8 ին, եւ 11 ժամ սխալ ունի․
8 Տճ․ Զիլգաղէն այսօր է, եւ ոչ թէ 9 ին․
9 Հրէից Ադար ամիսը 10 ին է, եւ ոչ թէ 9 ին․
13 Հայոց Նիրհան ամիսը 14 ին է․
15 Հրէից ծոմը 16 ին է․
16 Լուսնի քառորդը 15 ին է․
18 Տճ. Գուրպան պայրամին 17 ին է

20 Տճ գ ճշմրէն 21 ին է.
21 Հրէից ծոմը 22 ին է.
22 Հրէից Շէքէր պայրամին 23 ին է.
23 Հրէից պայրամին Բ. օրը 24 ին է.
24 Այսօր է Պէրախուլ աճխուզ եւ ոչ թէ 25 ին։

## ՄԱՐՏ

1 Քառորդը 2 ին է.
8 Արեգական մուտը 9 ին է.
9 Հրէից Նիսան ամիսը 11 ին է, եւ երկու օր տարբերութեամբ մեծ սխալ է, որովհետեւ Քրիստոնէից Ս. Զատիկը այս ամիսէն կախումն ունի.
14 Հրէից Ապիպը 16 ին է.
18 Հայոց Արեգ ամիսը 14 ին է, չորս օր սխալ, աններելի է.
23 Հրէից Պասէքը, (խամուրսուզը) ճիշդ 25 ին է, մեծ սխալ երկու օր տարբերութեամբ, եւ Զատկական Աւագ Լուսնը ճիշդ

24 ին է , 'ի ժամ 22 րո. 23 ,
որով Զատիկ պիտի գտնուի, եւ
25 ժամ աններելի սխալ .

24 Հրէից Ա̄ . օր պայրամին բոլորո-
վին սուտ է .

25 Այսօր է հրէից Պասէքը .

26 Այսօր հրէից Բ̄ օր Պասէքին
պէտք է գրուիլ .

29 Հրէից Է̄ . օրը 31 ին է չիտակը.

30 Հրէից Ը̄ . օրը Ապրիլ 1 ին է ճիշդ.

## ԱՊՐԻԼ

3 Հրէից ծոմը 5 ին է.

7 Լուսնի ծնունդը 8 ին է .

8 Տճ. Սէֆէր ամիսը 9 ին է . եւ
հր Եառ ամիսը 10 ին է .

16 Հրէից ծոմը 18 ին է .

20 Այսօր հայոց Ադամ ադարեան
ամիսը պէտք է գրել .

21 Հրէից Ա̄. խամուրսուզը 23 ին է ,

22 Լուսնի ծնունդը 23 ին է . ժամ
6 րո. 6 որով 26 ժմ. սխալ ունի.

## ՄԱՅԻՍ

7 Հրէից Սիվան ամիսը 9 ին է․ եւ հայոց Մարերի ամիսը 8 ին է․
12 Հրէից Պէնտէկոստէն (կիւլ բանայիրին) 14 ին է․
13 Հրէից ը օրը 15 ին է․ եւ այսօր հայոց Մարերի ամիսն է, եւ 17 ին գլխագրով մարերի գրածը սուտ է։
14 Ութբաթ աւուր լուսնական ամսաթիւը 7 կը գրէ, եւ հետեւեալ չաբաթ օրը 9ը կը գրէ, 8 րդ թիւը որ աւուր ձգեր է յայտնի չէ․ եւ լուսնի քառորդը 15 ին է։
15 Հրէից ը․ օր գրելի է․
21 Լուսնի լրումը 22 ին է․ 25 ժամ սխալ ունի․
23 Այսօր Լտ․ տօն Ամենասուրբ Երրորդութեան է․
24 Յունաց պահքը 26 օր է 29 օր չէ․

28 Քառորդը 29 ին է .
31 Լտ. տօն Ամենասուրբ Երրորդութեան , հիչ տեղը չկայ ։

## ՅՈՒՆԻՍ

4 Լտ. տօն սրտին Յիսուսի , պէտք է գրել .
5 Լուսնի ծն. 6 ին է .
6 Հայոց Մարգաց ամիսը 7 ին է. Տճ. Րէպիւլ ախըրը 7 ին է . Հրէից Թէմուզ ամիսը 8 ին է .
9 Արեւադարձ ամառնամուտը 10 ին է , վասն զի արեգական խեցգետնին կենդանակերպը մտնալը ճիշդ Յունիս 10 ժմ. 6 րո. 54 ին է.
12 Այսօր հայոց Մարգաց ամիսը գրելի է .
16 Տօմ. Մարդացը սխալ է , 12 ին գրելի է .
19 Լուսնի լրումը 20 ին է 'ի ժամ 19 րո. 00 .
22 Հրէից ծոմը 24 ին է .

## ՅՈՒԼԻՍ

5 Հրէից Աբ ամիսը 7 ին է.
6 Հայոց Հրոտից ամիսը 7 ին է.
12 Այսօր ըստ տօմարի հայոց Հրոտից ամիսը գրելի է, եւ քառորդը 13 ին է.
13 Հրէից ծոմը 15 ին է.
16 Հրոտից ամիսը 12 ին է, գոնէ գլխագրով չըդնէր որ աչքի չ'երեւար.
17 Յունաց Մարիամեայ կուսին է.
19 Լուսնի ծնունդը 20 ին է.
26 Տօն Խորհրդոյ Ս. Հաղորդութեան, Մայիս 27 ին է. յիրաւի զարմանալի սխալ, զի ուղիղէն 60 օր հեռի կը գտնուի։

## ՕԳՈՍՏՈՍ

3 Ծնունդ լուսնին 4 ին է.
4 Հրէից Իլուլ ամիսը 6 ին է, ճէմազիլ ախըրը 5 ին է.

5 Աւելեաց ամիսը 6 ին է.

10 Քառորդը 11ին է.

11 Ըստ տօմարի մերոյ Աւելեաց հայոց ամիսը այսօր է, չէ գրեր եւ ըստ Ցայսմաւուրաց Նաւասարդ ամիսն ալ չէ գրեր.

16 Զարմանալի եւ յիրաւի աններելի սխալ, որ ազգաւ հայ ըլլալով, դեռ հայոց ազգին սեպհական Թուականին Տարեգլուխը, որ օրը ըլլալը չենք գիտեր, վասն զի այսօր Օգոստոս 16, մեր Ազգային 1324 Թուականին Նաւասարդ ամսոյն տարեմուտն է, եւ Օրացոյցիս հեղինակը չգիտնալով կը տանի կը ձգէ Օգոստոսին 20 ին.

17 Լուսնի լրումը 18 ին է.

20 Մեծ սխալ՝ այսօր հայոց տարեմուտ գրելը, զի 16 ին է։

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

1 Սիւնակեաց ին սեռականը Սիւնակեցի է.

2 Հրէից Թշրին եւ 5632 ին տարեմուտը 4 ին է, եւ լուսնի ծն. 3 ին է.

3 Տաճկաց Րէճէպ ամիսը 4 ին է. եւ հրէից բ. օրը սուտ է.

4 Հրէից ծոմը 6 ին է, եւ այսօր հրէից տարեմուտ է.

5 Հրէից բ. օրը այսօր է.

6 Այսօր է հրէից ծոմը.

8 Լուսնի քառորդը 10 ին է.

11 Հրէից Քիփուռ քաւութեան մեծ տօնը, 13 ին է, եւ աշնանամուտը 12 ին է, զի արեգական կշիռ կենդանակերպի մուտը այսօր 'ի ժամ 23 րո. 49 ին է,

13 Այսօր հրէից Զորայ պայրամի է.

15 Այսօր հայոց Հոռի ամիս է.

16 Հրէից Խամիշ պայրամը 18 ին

է , մեծ սխալ է , եւ լուսնի լը-
րումը 17 ին է .

17 Հրէից Բ. օրը սուտ է ,

18 Այսօր հրէից Խամըշ պայրամի է.

19 Գլխագրոլ գրած հայոց Հոռի ամիսը 13 ին է , եւ հրէից Բ. օրն է .

22 Հրէից Է օրը սուտ է .

23 Հրէից Ը. օրը սուտ է .

24 Լուսնի քառորդը 25 ին է , եւ հրէից Է. օր է .

25 Հրէից Ը՛ օր է .

26 Հրէից Թ. օր է .

29 Տաճկաց Միրաճը 30 ին է :

ՀՈԿՏԵՄԲԵՐ

1 Լուսնի ծնունդը 2 ին է , 32 ժամ սխալ ունի .

2 Հրէից Խէշվան ամիսը 4 ին է Տճ. Շապանը 3 ին է .

11 Արեգական մուտը 12 ին է , 'ի ժամ 4 րո. 58 .

15 Այսօր հայոց Սահմի ամիսն է.
16 Տաճկաց Պէրամ կէճէսին 17 ին է.
30 Հրէից Քասլեւ ամիսը Նոյեմ. 2 ին է.
31 Յարութեան ը. Հր. Սեպ. 5 ին կարդայ պիտի եկեղեցին, եւ լուսնի ծնունդը Նոյ. 1 ին է, 26 ժամ սխալ ունի։

## ՆՈՅԵՄԲԵՐ

1 Տաճկաց Ռամազանը 2 ին է.
2 Հրէից Քասլեւ ամիսը այսօր է, եւ ոչ թէ Հոկ. 30 ին, չորս օր յառաջ.
7 Եկեղեցական մեծ սխալ է, Յարութեան հր. առաջինը գրելը զի առաջինը պիտի կարդացուի Մայիս 23 ին, երկրորդը Յուլիս 18 ին. ուստի այսօր պէտք է գրել երրորդ եւ չորրորդ.
9 Ըստ Յայսմաւուրաց այսօր հայոց

Տրէ ամիսն է, որ ուրիշ օր ալ չէ գրեր.

11 Արեգակն այսօր յաղեղնաւորն կը մտնայ, ժամ 2. րո. 14. որ ուրիշ օր ալ չէ գրեր.

16 Այսօր Ազարիայի ամիսն է, որ Համիրայ երբէք չէ գրեր, եւ Յն. Մատթէոսի աւետարանչին է.

24 Հրէից Խանուկայ պայրամը 26 ին է.

29 Լուսնի ծնունդը մինչ 30 ին է, որ 26 ժամ սխալ ունի.

30 Տաճկաց Շէվվալը եւ Պայրամը, եւ հրէից Թէբէթ ամիսը Դեկ. 1 ին է.

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

9 Հրէից ծոմը 10 ին է.

14 Լուսնի լրումը 15 ին է.

19 Յարութեան հր. չորրորդն է.

26 Յարութեան հր. չորրորդն է.

որովհետեւ առաջինը Յուլիս 11 ին, երկրորդը Սեպ. 5 ին, եւ երրորդը Հոկ. 31 ին պիտի կարդացուի 'ի Ս. եկեղեցին.

29 Տաճկաց Զիլգատէն 31 ին է.

## ԱՐԱՄԵԱՆ ՕՐԱՑՈՅՑՆԵՐՈՒՆ ՍԽԱԼՆԵՐԸ

### ՅՈՒՆՈՒԱՐ

1 Հարցը, բձ, սխալ է. պէտք է գրել, հարց. հան. դձ.
14 Ովգան Հայոց ամիսը 15 ին է.
17 Յարութեան կր. հինգերորդն է.
24 Յարութեան կր. պակաս է.
30 Յունաց, այսօր ճիշատակ մեռելոց է.
31 Յարութեան կր. այսօր ալ պակաս է։

## ՓԵՏՐՈՒԱՐ

1 Յունաց Նաւակատիք է յայսմ եօթնեկի.
6 Տաճկաց ծէմրէն, 7 ին է.
13 Տաճկաց երկրորդ ծէմրէն 13 կը դնէ, միանգամայն 14 ին կը գրէ, որ է անկարելի։
20 Տաճկաց գ. ծէմրէն 21 ին է.
25 Տաճկաց Պէրատիւլաճիւզը 24 ին է.

## ՄԱՐՏ

15 Հայոց Արեգ ամիսը 14 ին է, եւ Հրէից Ապիպը 16 ին է.
25 Այսօր Ս. եկեղեցին Ամենասուրբ Հաղորդութեան տօնը կը կատարէ, չեմ գիտեր ինչու համար վերցուցեր է.
26 Հրէից Ա. օր է.
31 Հրէից Է. օր է.

### ԱՊՐԻԼ

1 Հրէից Ը. օր է.
5 Հրէից ծոմ կայ այսօր.
19 Մայիսը տօն չունի, եւ Հրէից ծոմը 18 ին է.

### ՄԱՅԻՍ

2 Յունաց գլուխ նշխարաց է.
7 Հրէից Սիվան ամիսը 9 ին է, եւ Մարերի հայոց ամիսը 8 ին է.
9 Հրէից Սիվան 7 ին ալ կը գրէ.
15 Հրէից Է. օրն է պայրամին.
17 Յունաց ուտիք է յայսմ եօթնեկի
23 Յարութեան Ա. Կր. չէ գրեր.
24 Յունաց առաքելոց պահքը 36 օր է, եւ ոչ թէ 39.
27 Հաղորդութիւնը սուրբ է.

### ՅՈՒՆԻՍ

4 Լտ. տօն սրտին Յիսուսի է.
11 Յոյնք տօն չունին.

## ՅՈՒԼԻՍ

3 Այսօր հայոց Ս. եկեղեցին նաւակատիք ունի, որ չէ գրեր.
7 Այսօր հրէից Աբ ամիս է.
11 Յարութեան հբ. չէ գրեր, որ մեր ազգին օրացոյցները հարիւրաւոր տարիներէ 'ի վեր այս համբարձինները գրելու սովորութիւնը ունին.
18 Դարձեալ չէ գրեր համբարձին.
25 Դարձեալ չէ գրեր համբարձին.
27 Գորդիոս, Պօղիքտոս, Սուրբ վկաները այսօր տօնելը եկեղեցական սխալ է, մանաւանդ անոնց հետը տօնելը Ս. վկային Գրիգորիս բոլորովին դուրս է ձգեր, եւ այն երեք Սրբոց տօնախմբութիւնը ըստ կարգադրութեան նախնի Ս. Հայրապետաց մերոց, Ս. Եկեղեցին մեր պէտք է յուլիս 29. Եչ. օր տօնել։

## ՕԳՈՍՏՈՍ

1 Դարձեալ Յարութեան համբար-
ձինները դուրս ձգեր է .
8 Դարձեալ համբարձի չէ գրեր .
11 Լուսնի քառորդը 12 ին է .
27 Մարիամ Ս. Կոյսը Աստուածա-
ծին կը ճանաչէ մեր Ս. եկեղեցին.

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

1 Սիւնակեաց բառին սեռականը
սիւնակեցի է .
5 Յարութեան հր. դարձեալ չը
կայ այսօր .
11 Եթէ այսօր արեգական Կշիռ
կենդանակերպին մուտը ճիշդ
ժամ 20 գիտէ նէ , հարկաւ Աշ-
նանամուտը եւ Հաւասարակածը
ըստ աստղաբաշխական դրու-
թեան 12 ին է .
19 Դարձեալ յարութեան հր. չու-

նի, եւ հրէից Է. օր է տաղաւարահարաց ․

20 Լատինացւոց տօն է պահապան հրեշտակաց ,

25 Հրէից Ը. օր է պայրամին ,

26 Հրէից Թ. օր է պայրամին ։

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

2 Տաճկաց Շապան ամիսը 3 ին է , Հր. Խէշվան ամիսը 4 ին է ։

3 Սուրբ յարութեան հր. դարձեալ չը կայ . եւ այսօր է Տճ. Շապանը ։

4 Այսօր է Հր. Խէշվան ամիսը ։

10 Յարութեան համբարձինները երեքն ալ չէ դրեր ։

15 Այսօր Հայոց Սահմի ամիս է ․

17 Դարձեալ յարութեան երկու համբարձին չէ դրեր ․

19 Հայոց Հոռի ամիսը երբէք տեղի չունի ․ զի Սեպտեմբեր 15 ին դրուեցաւ ․

30 Հրէից Քասղեւ ամիսը Նոյեմբեր 2 ին է .

31 Յարութեան հր. չէ դրեր ։

## ՆՈՅԵՄԲԵՐ

1 Այսօր է Տաճկաց Րամազանը , եւ ոչ երկուքին .

7 Այսօր մեր սուրբ եկեղեցին , դ . դ . համբարձի ունի . եւ լուսանի վեցերորդ օրը քառորդ դնելը ընդդէմ է աստղաբաշխական կանոնաց ։

11 Արեգական մուտը 10 ին է 'ի ժամ , 22 ։

14 Սուրբ եկեղեցին այսօր յարութեան դ . հր . կը խնդրէ , որ չէ դրեր ։

21 Այսօր Լատինացւոց առաջին կիւրակէ գալստեան , պէտք է դրել ։

23 Ըմբռնաղ դրելու է այսօր .

26 Տաճկաց Գատըր կէճէսին 27 ին է․

28 Համբարձին դ․ գրելու է։

29 Եկեղեցական աններելի սխալ, Գղերիկոս տօնելի սուրբ քահանայն, եւ քսան հազար սուրբ եւ երջանիկ մարտիրոսները, որք Յիսուսի Քրիստոսի սիրոյն վառեալ Նիկոմիդեայ քաղաքը (իզնիմիտ) Մաքսիմիանոս ամբարիշտ Թագաւորին հրամանաւ սուրբ եկեղեցւոյ մէջ հըրով այրեցան վասն հաւատոյն Քրիստոսի, այս երջանիկ վկաները Քրիստոսի այսօր օրացոյցիս հեղինակը անխղճաբար տօնելի օրերոց կարգէն դուրս ձըգեր է։ Որոյ անօրէնութիւնը կրօնական ժողովոյ կը վերաբերի, եւ իրենց գրած տեղեկագիրը կարդալով պիտի կարմըրին։

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

5 Յարութեան Դ. հբ. գրելի է, եւ նոյն աւուր եկեղեցական ձայնը չէ գրեր.

12 Դարձեալ յարութեան հբ. չը կայ.

13 Եկեղեցական ձայն, գձ, կը դնէ, եւ հետեւեալ օրը, աձ. կ'ըսէ, մեծ սխալ.

16 Ապարխայի Արամ ամիսը հայոց է եւ ոչ լատինացւոց.

19 Երկրորդ, երրորդ, եւ չորրորդ յարութեան համբարձիները պակաս է.

26 Հբ. Դ. պակաս է.

31 Տաճկաց Զիլքատէն 30 ին է, Եւ վերջապէս գեկտ. 13 էն մինչեւ 31 ին օրը, եկեղեցական բոլոր ձայները սխալ են, որոնք մի առ մի գրելու ձանձրացայ:

# Ռ· ԹԻՒՐԹՃԵԱՆԻ ՍԽԱԼՆԵՐԸ

## ՅՈՒՆՈՒԱՐ

17 Յարութեան հր· պէտք է հինգերորդ գրուի ·

26 Մարտիրոսաց հարցը դկ պէտք է գրուի որ չը կայ ·

28 Մարտիրոսաց ած հարցը պակաս է ·

31 Յարութեան հր· պէտք է հինգերորդ գրուի ·

## ՓԵՏՐՈՒԱՐ

1 Մարտիրոսաց հարցը պակաս է պէտք է գրուի ակ ·

7 Արեգական 'ի Ջուկն կենդանակերպը ըրած մուտը 6 ին է ·

25 Պէրտիւղ աճիւղը 24 ին է ·

## ՄԱՐՏ

4 Պառաւանց ցրտոյն վերջը 2 ին է·

9 Արեգական 'ի Խոյ կենդանակերպը ըրած մուտը 9 ժամ սխալ ունի ·

15 Հրէից Ապիպը մէկ օր ետքը պէտք է ըլլայ ·

## ԱՊՐԻԼ

8 Արեգական մուտը 5 ժամ սխալ

ունի .

19 Հրէից ծոմը 1 օր առաջ պէտք է ըլլայ .

## ՄԱՅԻՍ

23 Այսօր. յոյնք Ամենասուրբ Երրորդութեան տօն չունին .

## ՅՈՒՆԻՍ

Այս ամսոյ մէջ բոլոր մարտիրոսաց հարցերը չեն գրուած .

ՅՈՒԼԻՍ Ամսոյ մէջ ալ դարձեալ մարտիրոսաց հարցերը պակաս է. Դարձեալ ՕԳ. ՍԵՊ. ՀՈԿ. ՆՈՅ. ԴԵԿ. ամսոց մէջ ալ չեն գրուած մարտիրոսաց հարցերը

## ՍԵՊՏԵՄԲԵՐ

11 Հասարակածը 1 օր ետքն է .

17 Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց եւ կարգադրութեանց համաձայն մեզի պահք է այսօր, եւ այս պահքերը պակաս գըրուած ըլլալովը մեր Ս. Հայց կարգադրութեանցը հակառակ եղած է որ է եկեղեցական մեծ սխալ .

19 Լտ. վարդարանի տօն 21 ին է .

21 Այսօր Հայոց պահք է եւ չէ գրուած որ է մեծ սխալ .

23 Այսօր ալ պահք պէտք է ըլլալ մեր կրօնից համեմատ եւ հարկ չէ ըսել թէ ո՛չ ոք կարող է վերցնել ասոնք .

30 Յունաց համար գրած Ս. Լուսաւորչի տօնը անտեղի եւ սուտ է ։

## ՆՈՅԵՄԲԵՐ

2 Տաճկաց Ռամազանը 1 օր առաջ պէտք է որովհետեւ լուսնի ծն. Նոյ. 1 ժամ Չմին է .

11 Արեգական մուտը 1 օր առաջ պէտք է ըլլայ .

28 Տաճկաց Գատըր կիճէսի 1 օր առաջ պէտք է ըլլայ ,

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

31 Տաճկաց Զիլգատէն 1 օր առաջ պէտք է գրուիլ .

Ասոնցմէ զատ Արեգական մուտքերուն եւ լուսնոյ ծնունդներուն լրումներուն եւ քառորդներուն մեծ մասը սխալ ըլլալուն մի առ մի գրել ձանձրացանք ։

# ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ահաւասիկ Ներկայ Տարւոյս օրացոյցներուն, թէ եկեղեցական, թէ օտար ազգաց, եւ թէ երկնային լուսաւորաց մասին եղած բազմաթիւ սխալները ուղղեցինք. որպէս զի նոյն օրացոյցները գործածող անձինք սխալ տեղեկութիւններ չ՚առնեն, մանաւանդ եկեղեցական արարողութեանց մասին ըլլալիք չփոթութեանց առաջքը առնուի, եւ տուած ստակնին պարապը չ՚երթայ, որով եւ փոքրիկ ծառայութիւն մի ալ ըրած ըլլամք Ազգիս լութեան։

ՆԵՐՍԷՍ ՔԱՀԱՆԱՅ

ԽԱՍԳԻՒՂԻ։